ցրուիլ աբեղաթաղն, մնանել 'ի սենեակ Ծերունի Ստեփաննոս վարդապետի, գանակոծել զգրագիր վարդապետն, հարկանել զգետնի զվերակացու վանաց և պահանջել 'ի նը-մանէ Բոխլվոյ, և այսպէս զմանս ապտակէին և զայլս նա-խատէին և հայհոյէին, և համարձակ շրջելով 'ի մէջ վանաց բաղխէին զդրունս սենեկաց լախտիւ և տապարաւ, և այն միայն վասն 6000 դահեկանի, զորմէ գրեցաք· 'ի վերջոյ 'ի նեղ մտեալ Խորհրդականաց կողոպտեցին զմիաբանս, բայց ոչ դումարեցաւ այն 100 դահեկան· և յուսահատեալ խնդրէին զմահ և ոչ դտանէին· զայս ամենայն դառն արտասուօք նկարագրեն 'ի նամակի իւրեանց առ Փոխանորդն, զի հնարս դտցէ ազատելոյ 'ի տառապանաց։ Յետ ամենե-ցուն եռուն 31,000 դահեկան, և 30,000 եւս խոստացան փոխանակագրով հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս· 40,000 սահմանեալ տարեկան տուրքն, 15,000 Ֆէնյէ ֆո-բաքը, 6000 Ս· Յարութեան Ղափարն։ Այս 'ի սաստկա-նալ այսպիսի տարօրինակ բռնութեանց և հարկապահանջ նեղութեանց և տիրելոյ անկարգութեանց պարտատերց, մինչեւ դալ նստիլ 'ի դուռն եկեղեցւոյ Հրէից և այլազ-գեաց, և խօսիլ բանս անպատեհս զորս ոչ տանին լսելիք, և պաշարել զդրունս սենեկաց Խորհրդականաց եւ այլոց, 'ի խնդրել զառնելիս և զտոկոսիս նոցին։

Ժողովեալ ընդհանուր միաբանաց մինչեւ ցդռնապանն եւ ցաւելածուն գրեցին գիր բազմակնիք երկար բանիւք առ Պատրիարքունս, առ ազգապետս և առ ամենայն գըլ-խաւորս արհեստաւորաց 'ի Կոստանդինուպոլիս, յորում յետ յայտ առնելոյ զազգի ազգի նեղութիւնս և զչարչա-րանս իւրեանց, արտասուախառն պաղատանօք կողկողէին եւ աղաչէին հասանիլ յօգնութիւն, բառնալ 'ի թիկանց զլուծ ծանրութեան պարտուց, ազատիլ 'ի ձեռաց կեղ-քիչ բռնաւորաց և 'ի նեղչաց, մանաւանդ 'ի ձեռաց Նա-խիպ Օմար Էֆէնտեայ, որ գլուխն էր ամենայն չարեաց· հնարիչ աղետից, բանսարկու և թելադրիչ ամենեցուն 'ի չարիս, և հաշտ ակամբ հայիլ 'ի սուրբ տունն, և մի թո-ղուլ առնել կոխան ոտից օտար թշնամեաց· բաւական հա-մարել զտառապանս զոր կրեցին և կրեն, և զմուր դառ-նութեան զոր քամեցին· եւ այլ սոցին նման մորմոքիչ